ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՈՐՈՇՈՒՄ
2022Թ. ԳԱՐՆԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՉՀԱՆՁՆԱԾ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 15.03.2019թ. թիվ 5/13-Լ որոշմամբ հաստատված «Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ի հավելվածը հանդիսացող Պալատի խորհրդի 21.10.2020թ. թիվ 21/9-Լ որոշմամբ հաստատված Կարանտինի պայմաններում որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի 4-րդ կետի պահանջներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Սահմանել 2022թ. գարնան որակավորման քննությունը չհանձնած և հատուկ ծրագրով ուսուցում անցած հավակնորդների վերահանձնման որակավորման քննության կազմակերպման և անցկացման ժամանակացույցը, այն է՝

1.1. որակավորման քննություն վերահանձնելու դիմումների ընդունման ժամկետն է՝ 27.09.2022 թվականից մինչև 03.10.2022 թվականը ներառյալ.

1.2. որակավորման քննության վերահանձնումն անցկացվելու է 06.10.2022թ-ին, ժամը 10:00-ին՝ ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկում:

2. Սահմանել որակավորման քննությունը վերահանձնելու դիմումի ձևը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումը հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի նախագահ՝ Սիմոն Բաբայան

Որոշում N 03-Լ
27 սեպտեմբերի 2022թ.
ք. Երևան